Տեսական հրահանգներ

- Ձեզ տրվում է **B** գրությամբ ծրար: Խնդրում ենք ստուգել դրա վրա տպագրված մրցույթի մասնակցի կոդը: Ներսում կգտնեք՝
  1. Այս հրահանգների թերթիկը և/կամ
     Այս հրահանգների թերթիկը ձեր մայրենի լեզվով (եթե կա)
  2. Տվյալների թերթիկ և/կամ
     Տվյալների թերթիկ ձեր մայրենի լեզվով (եթե կա)
  3. Աշխատանքային թերթիկների հավաքածու
  4. Մեկ ծրար՝ **S** նշումով (խնդրում ենք ստուգել մրցույթի մասնակցի կոդը ծրարի վրա):
- **Ձեզ թույլատրվում է բացել S ծրարը միայն այն դեպքում, երբ հնչում է քննության սկիզբը նշող սուլիչը:**
- **S** ծրարի ներսում կգտնեք հետևյալը՝
  1. Հարցաթերթիկ և/կամ
     Հարցաթերթիկ ձեր մայրենի լեզվով (եթե կա)
  2. Ամփոփիչ պատասխանների թերթիկների(Summary Answersheet) հավաքածու:
- Այս քննության ընդհանուր տևողությունը 5 ժամ է:
- Այս քննությունը բաղկացած է հետևյալ հարցերից.

T01 և T02	10 միավոր յուրաքանչյուրը	$2 \times 10 =$ 20 միավոր
T03 և T04	15 միավոր յուրաքանչյուրը	$2 \times 15 =$ 30 միավոր
T05 – T08	20 միավոր յուրաքանչյուրը	$4 \times 20 =$ 80 միավոր
T09 և T10	35 միավոր յուրաքանչյուրը	$2 \times 35 =$ 70 միավոր
T11 և T12	50 միավոր յուրաքանչյուրը	$2 \times 50 =$ 100 միավոր
	Ընդհանուր՝	300 միավոր

- **Գրելով ձեր պատասխանները՝**
  1. <u>Summary Answersheet՝</u>
     - Յուրաքանչյուր հարցի համար տրամադրվել է առանձին answersheet: Գրեք ձեր մրցույթի կոդը answersheet-ի յուրաքանչյուր էջում:

- Յուրաքանչյուր հարցի / հարցի յուրաքանչյուր մասի վերջնական պատասխանը(ները) պետք է գրվեն answersheet-ի համապատասխան վանդակում:

2. <u>Աշխատանքային թերթիկներ՝</u>

- Ձեր մանրամասն աշխատանքը պետք է ներկայացված լինի աշխատանքային թերթիկում:
- Գրեք ձեր մրցույթի կոդը յուրաքանչյուր աշխատանքային թերթիկի երկու կողմերում:
- Սկսեք նոր հարց նոր աշխատանքային թերթիկի վրա: Գրեք հարցի համարը վերևում տրված վանդակում:
- Աշխատանքային թերթիկի երկու կողմերն էլ պետք է օգտագործվեն: Գրեք միայն շրջանակված տարածքում:
- Այն մասը որը չեք ուզում գնահատվի հստակորեն ջնջեք
- Յուրաքանչյուր հարցի համար աշխատանքային թերթիկի վերևի մասում տրամադրված վանդակում գրեք էջի համարը՝ սկսելով 1-ից (յուրաքանչյուր թերթիկ ունի 2 էջ): Օրինակ, եթե T01-ի համար օգտագործում եք միայն 1 աշխատանքային թերթիկ, հարցի համարը և էջի համարը պետք է լինեն համապատասխանաբար «T01, 1» և «T01, 2» այդ աշխատանքային թերթիկի ԱՌՋԵՎԻ և ՀԵՏԵՎԻ ԿՈՂՄԵՐՈՒՄ: Հաջորդը, եթե T02-ի համար օգտագործում եք 2 աշխատանքային թերթիկ, հարցի համարը և էջի համարը պետք է լինեն «T02, 1» և «T02, 2» առաջին աշխատանքային թերթիկի համար, իսկ «T02, 3» և «T02, 4» երկրորդ աշխատանքային թերթիկի համար:
- Անհրաժեշտության դեպքում կարող եք խնդրել լրացուցիչ աշխատանքային թերթիկներ:
- **Նկատի ունեցեք, որ աշխատանքային թերթիկները վերը նշված հրահանգների համաձայն չպատրաստելու դեպքում ձեր պատասխանները կարող են չգնահատվել:**

- **Քննության ավարտին.**
  - Ստուգեք, որ ճիշտ եք գրել ձեր մրցույթի կոդը և էջերի համարները բոլոր օգտագործված թերթիկների վրա:
  - Դասավորեք ձեր թերթիկները հետևյալ կերպ.
    Յուրաքանչյուր հարցի answersheet (սկսած T01-ից), որին հաջորդում են տվյալ հարցի համար օգտագործված աշխատանքային թերթիկ(ներ):
  - Նմանապես, հաջորդականությամբ դարսեք յուրաքանչյուր հարցի համար օգտագործված answersheet-ը և աշխատանքային թերթիկը(ները):

- Վերը նշված ձևով դասավորված բոլոր օգտագործված թերթիկները դրեք **S** փոքր ծրարի մեջ: Բոլոր answersheet-երը պետք է դրվեն **S** ծրարի մեջ՝ անկախ նրանից, թե դրանք օգտագործել եք, թե ոչ:

- **Գնահատվելու է միայն S փոքր ծրարի պարունակությունը: Այս ծրարի ներսում չտեղադրված ցանկացած թերթիկ չի գնահատվի:**

- Տեղադրեք փոքր **S** ծրարը մեծ **B** ծրարի մեջ:

- Բոլոր մյուս թերթիկները, մասնավորապես՝ հրահանգների թերթիկ(ներ), հարցաթերթիկ(ներ), տվյալների թերթիկ(ներ) և չօգտագործված աշխատանքային թերթիկ(ներ)ը, պետք է տեղադրվեն անմիջապես ավելի մեծ **B** ծրարի մեջ:

- Կապեք թելի կնիքը ծրարի **B** վրա:

- **B** ծրարը հանձնեք քննողին: Համոզվեք, որ սեղանին ոչ մի թերթիկ չի մնացել, բացի կանաչ և կարմիր քարտերից:

- **Ընդհանուր հրահանգներ՝**

  - Եթե քննության ընթացքում անհրաժեշտ է զուգարան այցելել, խնդրում ենք բարձրացնել ձեր սեղանին պահած կանաչ քարտը ձեռքը: Ձեզ կուղեկցի կամավոր:

  - Եթե քննության ընթացքում ձեզ անհրաժեշտ է որևէ այլ օգնություն, խնդրում ենք բարձրացնել ձեր սեղանին պահած կարմիր քարտը ձեռքը:

  - Գրելու համար օգտագործեք միայն սև կամ կապույտ գրիչ: Նկարելու համար կարող եք օգտագործել մատիտ:

  - Որոշ միավորներ կարող են հանվել, եթե վերջնական պատասխանը տրվում է առանց մանրամասն լուծման:

  - Որոշ միավորներ կարող են հանվել, եթե վերջնական պատասխանները պարունակում են նշանակալի թվանշանների սխալ քանակ, չափման միավորներ չկան կամ սխալ միավորներ են:

  - Հիմնարար և աստղագիտական հաստատունների անհրաժեշտ արժեքները պետք է վերցվեն ձեզ տրամադրված տվյալների թերթիկից: